Սխեմատիկ պատկերում

Նպատակ

ՎԽԿԲ տվյալների հավաքագրման փուլի կարևորագույն գործիքներից մեկը սխեմատիկ պատկերումն է, որով ձևավորվում են աղետավտանգ ու ռիսկային տեղանքների ու վայրերի, ինչպես նաև համայնքի կարողությունների և խոցելիության սխեմատիկ պատկերները: Սխեմատիկ պատկերման նպատակն է համայնքում ակնառու դարձնել այն հիմնական ռիսկային գործոններն ու տեղանքները, որոնք առօրյայում բնակիչները կարող են չնկատել կամ ուշադրություն չդարձնել: Ուսումնասիրության ընթացքում կատարվում են սխեմատիկ և վիզուալ գրանցումներ, լուսանկարվում են նաև վտանգավոր և խոցելի տարածքները: Հավաքված նյութերը տեղադրվում են համացանցից (Google earth) դուրս բերված սխեմատիկ պատկերի վրա: Առկայության դեպքում, կարող են օգտագործվել նաև տարածքի անօդաչու թռչող սարքերի օգնությամբ ստացված պատկերները: Նյութերը սխեմատիկ պատկերի վրա նշվում են որևէ գունային տարբերանշանով, օրինակ՝ դեղին գույնով կարելի է նշել խոցելիությունը, կարմիր գույնով՝ վտանգը, կանաչով՝ կարողությունը: Սխեմատիկ պատկերումը ստեղծում է համայնքին սպառնացող վտանգների, խոցելիության և կարողությունների համադրման ակնառու հնարավորություն: Այն, իր հերթին, հնարավորություն է ընձեռում հետազոտող թիմին պատկերացում կազմել վտանգներից յուրաքանչյուրի նկատմամբ համայնքի/բնակավայրի համակարգերին բաժին ընկնող ռիսկերի վերաբերյալ:

Սխեմատիկ պատկերումը իրականացնելիս մարդկանց պետք է խնդրել, որպեսզի նկարագրեն ոչ միայն ներկա իրավիճակը, այլև այն, թե ինչպես կարող է այն փոխվել: Սխեմատիկ պատկերը հնարավորինս պետք է տեղեկատվություն տրամադրի շրջակա միջավայրի հիմնական փոփոխությունների մասին, ինչպիսիք են հատված անտառային տեղամասերը, հեղեղավտանգ տարածքները, էրոզացված հողերը և այլն: Ընդ որում, մինչև կլիմայական որևէ տեղեկատվություն կրող նշումներ անելը, անհրաժեշտ կլինի ճշտել՝ արդյո՞ք դիտարկվող փոփոխությունները կապված են կլիմայի փոփոխության հետ, թե պայմանավորված են այլ գործոններով: Հավաքված տեղեկատվությունը հիմք կարող է հանդիսանալ նշելու համար այն վայրերը, որտեղ հնարավոր են ապագա փոփոխություններ: Սա ցույց կտա նաև, թե կլիմայական փոփոխությունների տեսանկյունից ո՞ր վայրերն են ենթադրվում առավել խոցելի:

Սխեմատիկ պատկերման գործընթացը պարտադիր ներառում է մանկական հիմնարկները, դպրոցները, խաղահրապարակը, մարզադաշտը՝ վերջիններիս շրջակայքը, վտանգի ակնհայտ և թաքնված գործոնները և այլն:

Սխեմատիկ պատկերված տեղանքը պետք է արտացոլի նաև, թե որքանով է անվտանգ կամ հարմարեցված մանկական հաստատությանը, դպրոցին հարող ճանապարհը հաշմանդամություն ունեցող երեխաների համար (ճանապարհ, ենթակառույցների հասանելիություն և անվտանգություն, թեքահարթակներ և այլ հնարավորություններ):

Կարևոր նշանակություն ունի սահմանամերձ համայնքներում ականապատված և վտանգավոր տարածքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը: Տվյալ համայնքների բնակիչները պետք է իրազեկված լինեն վտանգված գոտիների մասին՝ հետագայում դժբախտ պատահարներից զերծ մնալու համար: Սխեմատիկ պատկերման ժամանակ պետք է հաշվի առնվեն ականապատված տարածքները, դրանց չափերը և կատարվեն համապատասխան նշումներ սխեմատիկ պատկերի վրա:

Ակնկալվող արդյունքներ

Սխեմատիկ պատկերումն իրականացվում է ՎԽԿԲ թիմի անդամների (հնարավորինս դպրոցականների մասնակցությամբ), մարզային փրկարար ծառայության, աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների ներգրավմամբ: Չնայած ժամանակատար լինելուն, այն շատ կիրառելի գործիք է և համայնքի համար ստեղծում է իր կարողությունների, հզորությունների, վտանգների ու ռիսկերի համադրման համար ակնառու հնարավորություն: Ստացված արդյունքները քննարկվում են համայնքի հետ համատեղ, ենթարկվում են վերլուծության, կրկին մշակվում և կատարվում լրացումներ: